

2. — Անհատական խանգարումն: — Սոյն պիտի դատարկ ու շուայտ կենցաղ մ'իւր ետեւէն պիտի ձգէր երկու ծանր հետեւանքներ. եղծումն ներքին մարդոյն, եւ վատթարումն քաղաքական զօրութեան: Այդ երկու վնասներն ալ մեծապէս զգալի են հայ պատմութեան մէջ:

Ա. Մեր իշխանաց եղծումը կը սկսի՝ իրենց վայելքն ու զեղխութիւնքը ձեռք բերելու անարժան եղանակովն իսկ: Շատ յայտնի է՝ թէ անոնց անաշխատ կեանքն անբաւական էր ընծեռելու իրենց այնքան փարթամութիւն, եւ ստիպուած ենք ուրիշ աղբիւր որոնել ասոր. իրենց հպատակ ժողովրդեան վաստակն իսկ, զոր աւատական իրաւամբ կը կթէին անոնք: Եւ մինչ զգուշաբան պատմիչ մը փափուկ ձեռով կը կոչէ զայս՝ «մատուցանել ընծայս իշխանաց» աշխատաւորին կողմանէ, եւ տաժանեալ քրէագործին քրտունքը կը սահմանէ մեղմով՝ «գանձել անձանց զշահս եւ զվայելս այսր աշխարհիս՝ ի մեծութիւն թագաւորաց եւ ի հաստատութիւն հարկահանաց» (Փրպ. 27, 24-5), ուրիշ մը, աւելի համարձակախօս, մեծատանց այդ փարթամութիւնը կը հռչակէ «ի յափշտակութենէ եւ ի զրկանաց ժողովեալ անօրէնութեամբ եւ ազահութեամբ» (Մանդ.